# ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՎ ՄԵՐ ՍՐԲԱՑՈՒՄԸ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Հով. 16.7-9

***Սուրբ Հոգու աշխատանքը աշխարհում:***

*7 Բայց ես ճշմարտութիւնն եմ ասում ձեզ, թէ լաւ է ձեզ համար, որ ես գնամ. որովհետեւ եթէ չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մօտ. բայց եթէ գնամ, նորան կուղարկեմ ձեզ մօտ:*
*8 Եւ նա՝ երբոր գա՝ աշխարհքին կյանդիմանի **մեղքի** համար, եւ **արդարութեան** համար, եւ **դատաստանի** համար:*

*9 Մեղքի համար, որովհետեւ ինձ չեն հավատում: 10 Արդարութեան համար, որովհետեւ ես իմ Հօր մօտ եմ գնում, եւ ինձ այլ եւս չէք տեսնի: 11 Եւ դատաստանի համար, որովհետեւ այս աշխարհքի իշխանը դատապարտուած է:*

***Սուրբ Հոգու աշխատանքը հավատացյալի կյանքում:***

*1 Պետ. 1.2,16 - 2 Հօր Աստուծո կանխագիտութեան պէս, **Հոգու սրբագործության,** ինազանդվելու և Հիսուս Քրիստոսի արյունով մաքրվելու համար. թող շնորհն ու խաղաղությունը շատանան ձեզ վրա: 16 **«Սուրբ եղեք, որ Ես սուրբ եմ»**:*

***Ի՞նչ է սրբությունը, ո՞րն է դրան հասնելու ճանապարհը և ովքե՞ր կարող են սուրբ համարվել:***

***Սուրբ նշանակում է՝ զատված, անջատված:***

***9 Սրբացում:***

*Սրբացումը՝ չարից առանձնանալու և Աստծուն նվիրվելու քայլ է (Հռոմեացիների 12.1-2, Ա Թեսաղոնիկեցիների 5:23, Եբրայեցիների 13.12): Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ «սրբության» մասին, «...որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբրայեցիների 12.14): Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք ինազանդվել այս պատվիրանին. «Սուրբ եղեք, որ Ես սուրբ եմ» (Ա Պետրոս 1.15-16): Սրբացումն իրագործվում է հավատացյալի կյանքում, երբ նա ճանաչում է իր **նույնությունը Քրիստոսի հետ՝** Նրա մահվան և հարության մեջ, և **ամեն օր** հավատքով հենվում է այս միության փաստի վրա, և շարունակաբար հանձնում է իր բոլոր կարողությունները Սուրբ Հոգու իշխանությանը:*

## I. ԴԻՐՔԱՅԻՆ ՍՐԲԱՑՈՒՄ – ԱՐԴԱՐԱՑՈՒՄ:
**INSTANTANEOUS/POSITIONAL SANCTIFICATION – JUSTIFICATION.**

*Ա Կորնթացիս 1.2-3 – Աստծու եկեղեցուն, որ Կորնթոսում է, Քրիստոս Հիսուսով սրբուածներիդ՝ կանչուած սուրբերիդ՝ բոլոր նրանց հետ, որոնք ամենուրեք կանչում են անունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ նրանցն է և մերը.*

*1 Կոր. 6.11 - 11 Եվ ձեզնից ոմանք այսպիսին էին, ԲԱՅՑ **լվացվեցիք**՝ բայց **սրբվեցիք**՝ բայց **արդարացաք** Տեր Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծու Հոգով:*

*2 Թես. 2.12 - 12 ...Աստուած սկզբիցն ընտրեց ձեզ փրկութեան համար Հոգու սրբութեան եւ **ճշմարիտ հավատքի** մէջ.*

*1 Պետ. 2:9 - 9 Բայց դուք ընտիր ազգ էք, թագաորական քահանայութիւն, **սուրբ ազգ,** սեփհական ժողովուրդ, որ քարոզէք նորա առաքինութիւնները, որ ձեզ խաւարիցը կանչեց իր զարմանալի լոյսի մէջ.*

## II. ԱՌԱՋԸՆԹԱՑ ՍՐԲԱՑՈՒՄ – ՀՈԳԵՎՈՐ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ: PROGRESSIVE SANCTIFICATION – SPIRITUAL MATURITY.

*Հայտնություն 22.10-11 – Եվ ինձ ասաց. Այս գրքի մարգարեության խոսքերը կնքված մի՛ պահիր, որովհետև ժամանակը մոտ է: Անիրավություն գործողը թող ավելի անիրավանա, և կեղտոտը թող ավելի կեղտոտվի, և արդարը թող ավելի արդարանա, և **սուրբը թող ավելի սրբանա**:*

*Հռ. 6.11,19,22 - 11 Նույնպես էլ դուք ձեզ մեղքի համար մեռած **համարեք**, իսկ Աստծու համար՝ կենդանի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:*

*19 ... այնպես էլ հիմա ձեր անդամները արդարությա՛նը ծառա մատուցեք **սրբանալու համար:***

*22 Բայց հիմա, որ մեղքից ազատված եք և Աստծու ծառա եք դարձել,՝ ձեր **պտուղն ունեք սրբանալու համար**,և դրա վերջը հավիտենական կյանքն է:*

***Իսկ ո՞րն է պտուղը սրբանալու համար:***

*Գաղ. 5.22-23 - 22 Բայց հոգու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, 23 Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. այնպիսիների դէմ օրէնք չ'կա:*

***Օրինակ: Կարելի է ասել, որ սրբացումը բնութագրում է ամուսնական անկողինը: Երկու անկատար մարդիկ ամուսնանում են միասին՝ դարձնելով իրենց ամուսնական անկողինը սուրբ և կատարյալ ողջ կյանքում: Նմանապես, ձեր վերստին ծնված հոգին մաքուր է և սրբագործված, քանի որ այնտեղ միայն ձեր և Աստծո Հոգին է ապրում:***

*Եբր. 13.4 - 4 Ամուսնությունն ամբողջովին պատվական է, իսկ ամուսնական անկողինը՝ **սուրբ**:*

## III. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՐԲԱՑՈՒՄ – ՓԱՌԱՎՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ:
## ULTIMATE SANCTIFICATION – GLORIFICATION.

*1 Հով. 3.2 - 2 Սիրելիներ, հիմա Աստուծոյ որդիներ ենք, եւ տակավին հայտնված չէ թէ ինչ պիտի լինենք. բայց գիտենք թէ, երբոր նա կ՚հայտնվի,* ***<u>նորան նման կ՚լինենք</u>****, որովհետեւ կ՚տեսնենք նորան ինչպէս որ է:*

*1 Թես. 5.23 - 23 Եւ ինքը խաղաղութեան Աստուածը* ***ձեզ սուրբ անէ ամբողջովին.*** *ու ձեր ամբողջ հոգին, շունչը և մարմինը անարատ պահվեն մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը:*

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ